

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԵՎՈՐԳ ԱՇՈՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ԱՆՁՆԱԿԱՆ ԵՎ ԱՆԴՐԱԴԱՐՁ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ
ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ԱՆԳԼԱԼԵԶՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԴԻԱՅՈՒՄ**

Ժ. 02.07 - «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի զիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բ.գ.դ., պրոֆեսոր Լ. Հ. Ֆլյան

**Պաշտոնական
ընդդիմախոսներ՝**

բ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ա. Սիմոնյան
բ.գ. թ., դոցենտ Ռ. Ա. Առաքելյան

**Առաջատար
կազմակերպություն՝**

Խաչատուր Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական
համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018թ. նոյեմբերի 28-ին՝ ժամը 11:00-ին, ՀՀ ԲՈԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018թ. հոկտեմբերի 17-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
բ.գ.դ., պրոֆեսոր՝



Ե.Լ. Երզնկյան

Տեղեկատվական տեխնոլոգիաների աննախադեպ զարգացումը ձևավորել է հաղորդակցման նոր միջավայր, այն է՝ հաղորդակցումն առցանց տիրույթում, ինչն այսօր դարձել է մերօրյա իրականության անբաժանելի մի մասը: Առցանց հաղորդակցման այս նոր միջավայրում սկսել են կիրառվել նոր լեզվական միավորներ, որոնք երևան են գալիս ոչ թե համակարգչային տեխնիկայի և համակարգչային հաղորդակցման ձևի զարգացմանը զուգընթաց, այլ պայմանավորված են լեզվի նոր միջավայրում ակտիվ կիրարկմամբ:

Սույն աշխատանքի **օբյեկտը** ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիան է՝ որպես մերօրյա իրականությունում ամենաբուռն և դինամիկ կերպով զարգացող միջավայր:

Ուսումնասիրության **առարկան** ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիա հարթակներում կիրառվող անձնական և անդրադարձ դերանունների շեղումներն ու այլակերպ գրելաձևերն են՝ դրանց ձևաբանական, ոճական, գործաբանական, իմաստային, ճանաչողական և հաղորդակցական յուրահատկությունների ուսումնասիրությունը:

Սույն ատենախոսության **նորույթն** անգլալեզու սոցիալական մեդիայում անգլերենի անձնական և անդրադարձ դերանունների շեղումների որոշարկումը և այլաձև քերականական միտումների վերհանումն է: Վերջիններս կարող են պատահական կիրառումից զարգանալ և դառնալ լեզվական նորմ և օրինաչափություն:

Աշխատանքի **արդիականությունը** պայմանավորված է այն հանգամանքով, որ ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիայի տարբեր հարթակներում օգտատերերը գրեթե ամեն օր գործածում են անձնական և անդրադարձ դերանունների նոր այլաձև տարատեսակներ, որոնք հակադրվում են լեզվում առկա նորմերին:

Մեր հետազոտության **նպատակն** է բացահայտել անձնական և անդրադարձ դերանունների գործաբանական առանձնահատկությունները սոցիալական մեդիայում, ուսումնասիրել դրանք ինչպես սոցիալական մեդիայի տարբեր ենթաժանրերում, այնպես էլ լեզվի տարբեր մակարդակներում:

Մեր կողմից կատարվելիք հետազոտությունը միաված է լուծելու հետևյալ **խնդիրները**

- Քննարկել առցանց հաղորդակցման լեզվագործաբանական յուրահատկությունները:
- Հետազոտել ժամանակակից սոցիալական մեդիային բնորոշ լեզվական և ժանրային առանձնահատկությունները:
- Ուսումնասիրել անձնական և անդրադարձ դերանունների իմաստային, ճանաչողական, հաղորդակցական և գործաբանական առանձնահատկությունները:

- Որոշարկել անձնական և անդրադարձ դերանունների շեղումները և այլաձև կիրարկումները ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիայի տարատեսակ հարթակներում:
- Վերլուծել անձնական և անդրադարձ դերանունների հնարավոր փոփոխման միտումները «սոցիալական մեդիա» գերժանրում:

Սույն ատենախոսության **տեսական արժեքը** ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիային ներհատուկ ոճաժանրային և լեզվագործաբանական առանձնահատկությունների վերհանումն է, ինչպես նաև «սոցիալական մեդիա» գերժանրում մեծ հաճախականությամբ կիրառվող անձնական և անդրադարձ դերանունների շեղումների և այլաձև կիրարկումների վերլուծությունն ու որոշարկումը, որոնք հնարավոր է, որ հետագայում գրական լեզվի նորմերը ենթարկեն փոփոխությունների:

Աշխատանքի **գործնական նշանակությունը** նրանում է, որ սույն հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել համակարգչային լեզվաբանության, մեդիալեզվաբանություն, վարիացիոն լեզվաբանության ոլորտներում կատարվող ուսումնասիրություններում, ինչպես նաև տեսագործնական նյութ կարող են ծառայել ուսանողների համար կուրսային և ավարտական աշխատանքներ, ատենախոսություններ և գործաբանությունից, մեդիալեզվաբանությունից ու բառագիտությունից հատուկ դասընթացներ պատրաստելու համար:

Սույն ատենախոսության **մեթոդաբանական հիմքում** ընկած են անձնական և անդրադարձ դերանունների շեղումներին վերաբերող հարցադրումներ, դրանց վերաբերյալ տարբեր լեզվաբանների տեսակետների վերլուծություններ և մեկնաբանություններ:

Աշխատանքում օգտագործվել են արդի լեզվաբանության ուսումնասիրության մի շարք **մեթոդներ**՝ զուգադրական, բաղադրիչային վերլուծության, փոխակերպման, դիտման, հարցման և այլն: Վերջիններիս ընտրությունը բխում է ուսումնասիրվող նյութի բնույթից, ատենախոսության նպատակից և խնդիրներից:

Սույն աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք համապատասխանաբար բաժանվում են ենթագլուխների, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ներածության մեջ ներկայացվում են ուսումնասիրության առարկան և օբյեկտը, աշխատանքի նպատակը, խնդիրները, կառուցվածքը, հիմնավորվում են թեմայի արդիականությունը, տեսական և գործնական արժեքները:

Ատենախոսության առաջին գլուխը «**Հաղորդակցությունը որպես անձի գոյության կարևոր նախապայման**» բաղկացած է երեք ենթագլխից:

Աշխատանքի առաջին գլխի առաջին ենթագլուխը **«Սոցիալական մեդիան որպես հաղորդակցման նոր միջավայր»** անդրադառնում է հասարակության կյանքում հաղորդակցման գործընթացի նշանակալի դերին և կարևորությանը, ինչպես նաև նրա հարափոփոխ բնույթին:

Մերօրյա իրականությունում հաղորդակցական և տեղեկատվական տեխնոլոգիաների առաջընթացը ձևավորել է տեղեկատվության մասսայական տարածման մի շարք միջոցներ, որոնց շարքում սոցիալական մեդիան առանձնահատուկ կարևորություն ունի: Հիրավի, այն միլիոնավոր մարդկանց համար դարձել է հաղորդակցման գերակայող կապուղի:

Առաջին գլխի երկրորդ ենթագլուխը վերնագրված **«Ժամանակակից սոցիալական մեդիայի ժանրային առանձնահատկությունները»** անդրադառնում է առցանց հաղորդակցման միջավայրում ձևավորված նոր ժանրերին, դրանց առանձնահատկություններին և դասակարգման չափանիշներին: Ընդհանուր առմամբ, այս ժանրերը միտված են առավել մեծ թվով օգտատերեր ներգրավելու առցանց տիրույթ: Առցանց ժանրերի ներկայացման համատեքստում՝ անդրադարձ է կատարվում նաև սոցիալական մեդիային և այն դիտարկվում է որպես նոր գերժանր, ուսումնասիրվում են այդ գերժանրին բնորոշ ռճական առանձնահատկությունները:

Առաջին գլխի երրորդ **«Սոցիալական մեդիայի լեզվական առանձնահատկությունները»** ենթագլխում ներկայացվում են ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիայում ընթացող հաղորդակցման լեզվին առնչվող հարցեր, զուգահեռներ անցկացվում առցանց հաղորդակցման լեզվի՝ որպես հաղորդակցման նոր և համընդհանուր կերպով տարածված տարատեսակի և գրավոր ու բանավոր խոսքերին ներհատուկ հատկանիշների միջև:

Աշխատանքի երկրորդ գլուխը **«Լեզվական շեղումների ու այլակերպ գրելաձևերի առաջացման աղբյուրները և դրանց գործաբանական արժեքը»** բաղկացած է երկու ենթագլխից:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում **«Լեզվական շեղումները և այլակերպ գրելաձևերը ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիայում»** քննարկվում են լեզվական նորմի և ուզուսի փոխհարաբերություններին վերաբերող հարցեր՝ մասնավորապես շեշտադրելով մերօրյա իրականությունում մասսայական տեղեկատվության տարածման և հաղորդակցման միջոցների էական նշանակությունը լեզվական համակարգում նոր նորմերի ձևավորման գործընթացում: Հարկ է նշել, որ այսօր սոցիալական մեդիա հարթակները վերածվել են նորմաստեղծ միջավայրի: Այս առումով ռուս

լեզվաբան Գ. Նեմիշենկոն նշում է, որ նորմաստեղծ գործառույթը 20-րդ դարում գրական դաշտից տեղափոխվել է մեդիատարածք¹:

Այնուհանդերձ, կարևորում ենք ընդգծել այն հանգամանքը, որ ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիայում շրջանառվող շեղումները և այլակերպ գրելաձևերը լուրջ վիճաբանությունների առարկա են դարձել տարբեր լեզվաբանների շրջանակներում: Այսպես Նեթլինգո առցանց բառարանի հիմնադիր Է. Ջենսնը նշում է, որ նոր տեխնոլոգիան լեզուն էապես չի փոփոխել, այլ հսկայաձավալ բառապաշար է ավելացրել²: Նույն կարծիքն է կիսում արևմտյան հետազոտող Դ. Քրիսթլը: Այնինչ, առցանց հաղորդակցման տիրույթում առկա լեզվական շեղումների և այլաձև կիրարկումների վերաբերյալ այլ տեսակետ ունի լեզվաբան Ջ. Համփերսը: Ըստ նրա՝ հաղորդակցվողները ոչնչացնում են լեզուն, թալանում մեր կետադրությունը, խարխլում մեր նախադասությունները, բռնագրավում մեր բառապաշարը: Նրանք պետք է դադարեցնեն այն³:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլուխը վերնագրված «**Լեզվական շեղումների և այլակերպ գրելաձևերի գործաբանական արժևորումը ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիայում**» ուսումնասիրում է սոցիալական մեդիա հարթակներում բարձր հաճախականությամբ շրջանառվող լեզվական շեղումների և այլակերպ գրելաձևերի առանձնահատկությունները՝ գործաբանական տեսանկյունից:

Անդրադառնալով համացանցում առկա լեզվական շեղումների առկայությանը՝ չինացի լեզվաբաններ Թ. Բալդվինը և Ջ. Չայն իրենց «Նորմավորումից այն կողմ, բառաձևերի գործաբանությունը տեքստային հաղորդագրություններում» հոդվածում նշում են, որ տեքստային հաղորդագրություններում ոչ ճշգրիտ գրելաձևերը հաճախ պարունակում են ավելի շատ գործաբանական տեղեկություն, քան հնարավոր է գտնել

¹Регушевская И. *К вопросу о механизмах создания языковых норм*, Ученые записки Крымского федерального университета имени В. И. Вернадского, Филологические науки, Том 2 (68), № 1, 2016, с. 179, <http://sn-philol.cfuv.ru/wp-content/uploads/2017/02/reg_ush.pdf> [02.04.2018]

²Experts Divided Over Internet Changes to Language, <<https://www.voanews.com/a/experts-divided-over-internet-changes-to-language-81898572/162216.html>> [09.01.2017]

³Humphrys J. *I h8 txt msgs: How Texting is Wrecking our Language*, <<http://www.dailymail.co.uk/news/article-483511/I-h8-txt-msgs-How-texting-wrecking-language.html>> [17.11.2016]

սովորական բառաձևերում⁴: Հեղինակները միաժամանակ նշում են, որ լեզվական շեղումների հիմնական գործառույթն ասելիքը շեշտադրելու, մտերմություն ցուցաբերելու և ընկերական հարաբերություններ ու ուրախությունն արտահայտելու տարրեր են պարունակում⁵:

Լեզվական շեղումներն ու այլակերպ գրելաձևերը նաև ուսումնասիրության առարկա են դարձել կիբերգործաբանության ոլորտում: Վերջինս ուսումնասիրում է, թե ինչպես են օգտատերերն ընկալում համատեքստային տեղեկությունը, երբ ստեղծաշարի վրա օգտատերերի կողմից հավաքագրվող տեղեկությունը և այն, ինչ նրանք մտադիր են փոխանցել չեն համապատասխանում միմյանց⁶:

Ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիայի տարատեսակ հարթակներում շրջանառվող շեղումներին անդրադառնալով՝ հարկ ենք համարում նշել, որ առաջին հերթին իրենց նորմավորված տարբերակից շեղվում են հաղորդակցման ընթացքում համեմատաբար հաճախակի գործածվող բառային միավորները: Վերջիններս ներառում են սպասարկու բառերը, ինչպես՝ դերանունները, եղանակավորող և օժանդակ բայերը, նախդիրները, կապերը և այլն:

Ամերիկացի հոգեվերլուծաբան Զ. Փենբեյքը, ուսումնասիրելով սպասարկու բառերի առանձնահատկությունները, նշում է, որ դերանունները, հոդերը, նախդիրները, բայերը և զգացմունք արտահայտող բառերը մեզ հուշում են, թե ինչ են մարդիկ մտածում, զգում միմյանց հետ շփվելիս⁷:

Լեզվաբան Ի. դու Բուան, հետազոտելով հաղորդակցման գործընթացում դերանունների կարևորությունը, նշում է, որ առօրյա խոսքում զրուցակիցները դերանունների ընտրությամբ մերձեցնում կամ հեռացնում են միմյանց մյուս զրուցակիցներից⁸:

⁴Baldwin T., Chat J. *Beyond Normalization: Pragmatics of Word Form In Text Messages*, Proceedings of the 5th International Joint Conference on Natural Language Processing, Thailand, 2011, p.1437, <<http://www.aclweb.org/anthology/I11-1169>> [27.04.2018]

⁵Նույն տեղում էջ 1437, <<http://www.aclweb.org/anthology/I11-1169>>

⁶Yus F. *Cyberpragmatics: Internet-Mediated Communication in Context*, Amsterdam, John Benjamins Publishing Co., 2011, p.13.


⁷Pennebaker J. *The Secret Life Of Pronouns: What Our Words Say About Us* (Reprint Edition), New York, Bloomsbury Press, 2011, p.9.

⁸Bois du I. *Grammatical, Pragmatical and Sociolinguistic Aspects of the First Person Plural Pronoun*, Subjectivity in Language and Discourse, Language and Linguistics

Սույն ատենախոսության երրորդ գլուխը «**Դերանվանական շեղումները ժամանակակից սոցիալական մեդիայում**» բաղկացած է չորս ենթագլուխներից:

Առաջին ենթագլուխը վերնագրված է «**Անձնական դերանունների այլաձև կիրարկումները ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիայում**»: Այստեղ քննարկվում են անձնական դերանունների տեխնիկապես միջնորդավորված շեղումները, որոնք դրսևորվել են լեզվի տարբեր մակարդակներում: Այդ այլաձև տարատեսակներն առաջացել են լեզվական տնտեսման և առցանց միջավայրում անգլերենն ազատորեն իրացնելու արդյունքում՝ i, ay, ai, i, yuh, yo, yu, y, yoo, hi, shi, it, they, wi, thei, dey, dei:

Առանձին լեզվական այլաձև միավորների տեսքով իրացվելուց զատ՝ ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիայում անձնական դերանուններով արտահայտված ենթակա նախադասություններում նկատվում է նախադասության գլխավոր և երկրորդական անդամների միասնական վերարտադրում, որն ուղղակի կերպով չի արտացոլում դերանվան և օժանդակ բայի հանրագումարը: Այդ լեզվական միավորներում առկա են բազմաթիվ բառամիջյան և բառավերջյան տառերի սղումներ՝



Ինչպես տեսնում ենք, առաջին գծապատկերում պատկերված դերանվանական տարբերակներից «im, aem, am» տարատեսակները տառային և հնչյունային սղման արդյունքում են ձևավորվել:


Անգլերենի երրորդ դեմք եզակի թիվ անձնական դերանունների և «to be» օժանդակ բայի կրճատ գրելաձևերում օգտատերերը բառավերջյան խուլ u-ը բաղաձայնը վերածում են ձայնեղ q-ի, ինչպես՝ he is-hes-hiz, she is, shes-shiz, it is-its-itz: Ժամանակային սահմանափակվածության, տարածք տնտեսելու, հնարավորինս նվազ նիշերով առավելագույն տեղեկատվություն փոխանցելու,

ինչպես նաև համաժամանակյա երկխոսություն վարելու գործոնների արդյունքում են առաջացել նաև «they» և «we» հոգնակի դերանունների և «to be» օժանդակ բայի այլաձև կիրարկումները՝ wer, wea, wr, wa, theyar, thear, theyr, teya, teyar և այլն:

Լեզվական շեղումները և այլաձև գրելաձևերը չեն սահմանափակվել միմիայն անձնական դերանունների և «to be» բայի համադրություններով: Մեր հետազոտությունների արդյունքում հանդիպել ենք նաև անձնական դերանունների և մի շարք առօրյա գործածվող բայերի հետ միաձուլված կրճատ գրելաձևերի տարբերակներ, ինչպես՝ youv-you have, Iv-I have, shes-she has, hes-he has, its-it has, wev-we have, theyv-they have, lon-I do not, lc-I see, ld-I would, uaeno-you ain't even know, imma/ima-i may, I am going to, I am a, idk-i do not know, ik-i like, yw-you are welcome և այլն:

Վերլուծված մեծածավալ նյութի արդյունքում պարզ է դառնում, որ դերանվամբ արտահայտված ենթակաները վերափոխել են նախադասության շարահյուսական կազմությունը:

Յուրօրինակ բառային իրացումներով են դրսևորվում նաև խնդիր անձնական դերանունները: Վերջիններս միանում են իրենց նախորդող ստորոգյալներին, ձևակերպվում են նոր միակցություններ՝



Սոցիալական մեդիա հարթակներում հանդիպել ենք բազմաթիվ գրառումների, որտեղ խնդիր անձնական դերանուններն օգտագործվել են ենթակա անձնական դերանունների փոխարեն և հակառակը, ինչպես⁹ **me looking** for my will to live, **Them flying** monkeys, **Me** looking at some people and wondering, **With She** photo shot, God always **with we**, Rodgers then **followed she** and her daughter out of the grocery store. Heartbreaking **for HE**..:

Տվյալ այլաձև կիրարկումը չի սահմանափակվել միայն խնդիր անձնական դերանուններով, ներկայումս օգտատերերի գրառումներում անդրադարձ դերանունները նույնպես ստանձնում են ենթակայի պաշտոնը, ինչպես՝ Love the way that **myself** is walking, **Myself doing** a jig during the Amani Hangouts during the safe internet use launch at the capital!! **herself falling in love**

⁹Սեղմագրում ներկայացված օգտատերերի գրառումները քաղված են սոցիալական մեդիա հարթակներից:

with the brother within the opening titles was enough forme, **Himself is** never disturbed by what others think about him.

Անդրադառնալով այս այլաձև կիրարկմանը՝ արևմտյան լեզվաբան Է. Գուդն իր «Այն ամբողջ քերականությունը, որը Ձեզ անհրաժեշտ է կյանքում հաջողության հասնելու համար» աշխատությունում նշում է, որ անդրադարձ դերանունները երբեք չպետք է գործածվեն ենթակայի պաշտոնում, դրանք միշտ որպես խնդիր պետք է գործածվեն¹⁰: Այնուհանդերձ, այս ամենին զուգահեռ, օգտատերերի կողմից անդրադարձ դերանունների կիրառումը ենթակայի պաշտոնում ավելի հաճախակի բնույթ է ստանում:

Հատկանշական է այն, որ ենթակայի պաշտոնը ստանձնելուց զատ, անդրադարձ դերանունները գործածվում են նաև ուղիղ և անուղղակի խնդիրների պաշտոններում՝ **Does that work for yourself?** Could we perhaps Is the water temperature right **for yourself?** Can you help **myself** and friends did the RFL Ipswich muddy ...

Նյու Յորք Թայմսն իր «English Reflexive Pronoun Epidemic» առցանց հոդվածում օգտատերերի կողմից անդրադարձ դերանունների դինամիկ կերպով կիրառումը հետևյալ կերպ է մեկնաբանում. «...ինչն է սխալ նախկին «me» և «you» դերանունների գործածման մեջ: Այդ բառերը չափազանց կարճ և պարզ են հյուրընկալության և ծառայությունների մատուցման մեջ, որոնք ներկայումս բրիտանական տնտեսության ահռելի հատված են կազմում: Մարդիկ սովորել են արտադրել մեքենաներ: Այժմ նրանք հաղորդակցվելիս օգտագործում են այդ երկարավուն բազմավանկ անդրադարձ դերանունները մարդուն արժևորելու նպատակով¹¹»: Այսինքն, կարող ենք ասել, որ օգտատերերի կողմից խնդիր անձնական դերանունների և ենթակա անձնական դերանունների փոխարեն անդրադարձ դերանունների կիրառման գործաբանական նշանակությունը դիմացինին առավել մեծ կարևորություն տալն ու արժևորելն է:

Ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիայում ձևավորել է դերանվանը ոչ ներհատուկ որոշալության/առկայացման քերականական կարգը: Առցանց հաղորդակցման հայեցակարգում օգտատերերն անձնական դերանունները գործածում են որոշալ «the» հոդի հետ համատեղ՝ իրենց գրառումները հստակ կերպով ընդգծելու և շեշտադրելու նպատակով՝ **The she** tells me she's not a prude either. Who are **the 'We'** and who is **the 'He'**? **The we** **the** I-trailer. Many many happy returns of **the they**...

¹⁰Good E. oops, *Who's whose Grammar Book Is This Anyway: All the Grammar You Need to Succeed in Life*. New York, Barnes and Noble Books, 2002, p.129.

¹¹Cohen R. *The New York's Time: England's Reflexive Pronoun Epidemic*, <<https://www.nytimes.com/2016/07/29/opinion/english-for-yourself.html>> [15.07.2017]

Առցանց միջավայրում հաղորդակցվողները սկսել են վերարտադրել անձնական դերանունները՝ այլ խոսքի մասերին ներհատուկ վերջածանցների հետ համադրելով, ինչպես՝ theyish, youable, sheful, theyless, youward, theyism:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում «**Անդրադարձ դերանունների շեղումները ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիայում**» քննության են առնվում առցանց հաղորդակցման միջավայրում ակտիվորեն շրջանառվող անդրադարձ դերանունների այլաձև կիրարկումները, ներկայացվում դրանց առանձնահատկությունները և ուրվագծվում են հետագա փոփոխության հնարավորությունները:

Օգտատերերը սոցիալական մեդիայում միտված են լեզուն ուղղորդել պարզեցման: Լեզվի պարզեցումը դրսևորվում է ինչպես լեզվական միավորների տնտեսամաճ, տառերի և վերջավորությունների կրճատմամբ և սղմամբ, այնպես էլ քերականական կարգերի կազմության համասեռության միջոցով:

Անգլալեզու սոցիալական մեդիայի տարատեսակ հարթակներում մեր կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դառնում այն, որ ներկայումս օգտատերերը միտված են հոգնակի և եզակի անդրադարձ դերանունների վերջավորությունները միաձև կազմել՝

Աղյուսակ 2

ԱՆԴՐԱԴԱՐՁ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՇԵՂՈՒՄՆԵՐ

Myselfis	Myselfie	Selfmy	Myselfin
Yourselvis	Yourselfie, urselfie	Selfyou	Yourselfin
Herselvis, himselvis, itselvis	Himselfie, herselfie, ltselfie	Selfhim, selfher, selfit	Himselfin, herselfin, itselfin
Ourselvis	Ourselvie	Selfour	Ourselfin
Yourselvis	Yourselfie	Selfyour	Yourselfin
Themselvis	Themselfie	Selfthem	Themselfin

Հետաքրքրականն այն է, որ օգտատերերն առցանց խոսքաշարում տարածություն և ժամանակ խնայելու նպատակով միաժամանակ կրճատում են անդրադարձ դերանունների թե՛ առաջին, թե՛ երկրորդ բաղադրիչի տառերը, ինչպես՝

Աղյուսակ 3

ԱՆԴՐԱԴՎԱՐՁ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՇԵՂՈՒՄՆԵՐ

1 փուլ (առաջին բաղադրիչ)	1 փուլ երկրորդ բաղադրիչ "I"-սղում	2 փուլ "f"-ի սղում	3 փուլ "e"-ի սղում
Myself- Mself /y/	Mysef	Myse	Mys
Yourself-Yself, uself /our/	Yoursef	Yourse, urse	Yours
Himself-Hself, -, -/im/	Hersef, himsef, itsef	Himse, herse, ltse	Hers, hims, its
Weselves-Wself /e/	Oursef	Ourse	Ours
Yourselves-Yself, Uself /our/	Yoursef	Yourse	Yours
Themselves-tself (them)	Themsef	Themse	Thems

Եթե այս տրամաբանությամբ առաջ շարժվենք, ապա մոտ ապագայում առցանց հաղորդակցման համատեքստում անդրադարձ դերանունները օգտատերերի կողմից կիրառվեն արմատների սկզբնատառային համադրության տեսքով, ինչպես՝ ms, y/us, hs, ss, is, ws, u/ys, ts: Հարկ է նկատել, որ այդ տարբերակներն այլևս փոփոխությունների չեն ենթարկվի, դրանք կլինեն ավարտուն և ամբողջական տարատեսակներ:

Ուշագրավ է այն փաստը, որ անգլալեզու սոցիալական մեդիայում մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս նաև այն, որ ժամանակակից անգլերենի անդրադարձ դերանունները դուրս են եկել դերանվանը ներհատուկ խոսքիմաստային տիրույթից և վերածվել են խոսքային պատրաստի միավորների, որոնք օգտատերերի հայեցողությամբ ցանկացած պահին կարող են վերարտադրվել այլ խոսքի մասերի: Օգտատերերն իրենց գրառումներում պարզապես հավելում են այս կամ այն խոսքի մասին ներհատուկ վերջածանցներ՝ yourselfage, myselfist, yourselfship, himselfage, yourselfist, myselfdom, herselfship, yourselfdom, ourselfer, myselfhood, yourselfable, myselfful, myselfish, himselfable, yourselfless, yourselfous, myselfly, herselfly, themselfly, myselfwise, myselfward, myselfate, myselfify և այլն:

Երրորդ ենթագլուխը «Լեզվական շփումները որպես անձնական դերանունների այլաձև տարբերակների սկզբնավորման հիմք առցանց հաղորդակցման համատեքստում» քննարկում է ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիայում օգտատերերի կողմից կիրառվող անձնական

դերանունների այն այլաձև կիրարկումները, որոնք առաջացել են լեզվական շփումների և փոխազդեցությունների հետևանքով:

Այսպես, անգլերենում երկրորդ դեմք եզակի և հոգնակի թվում գործածվում է միևնույն բառաձևը, որը սակայն չի համադրվում բազմաթիվ օտարազգի զրուցակիցների մայրենի լեզվում առկա թվի քերականական կարգին: Հատկանշական է, որ օգտատերերը հոգնակի թիվ «դուք» դերանունը սկսում են կազմել «You» անձնական դերանվունը *s* վերջավորության հետ զուգակցելով, ինչի արդյունքում ստացվում է «Yous» տարբերակը: Անդրադառնալով այս խնդրին՝ Պ. Օքոները և Ս. Կելլերմենն իրենց հեղինակային բլոգում նշում են հետևյալը. «Ժամանակակից անգլերենում, ի տարբերություն այլ լեզուների, առկա է միայն մեկ բառաձև «You» հոգնակի և եզակի թվի համար: Որոշ լեզվաբաններ առաջարկել են «You-all, you-uns» տարբերակներն, իսկ «yous» և «youse» տարբերակները հոգնակի և եզակի «you» դերանունները տարբերակելու փորձի արդյունքում են առաջացել: Մենք կարող ենք ասել, որ այս երևույթը բնական է այն փախստականների համար, որոնց մայրենի լեզվում հստակորեն տարբերակված չեն «you» դերանվան հոգնակի և եզակի տարբերակները»¹²:

Բացի այդ, անգլալեզու առցանց քննարկման հարթակներում մեր կողմից կատարված ուսումնասիրությունների ընթացքում հանդիպել ենք բազմաթիվ գրառումների, որտեղ անգլերեն լավ չտիրապետող օգտատերերը փորձել են «he» և «she» անձնական դերանունների հոգնակի թիվը կազմել *s* հոգնակիերտ մասնիկի օգնությամբ, ինչպես իրենց մայրենի լեզուներում:

Ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիայում բացի վերը քննարկված շեղումներից, լեզվական շփումների արդյունքում զարգանում է մեկ այլ դերանվանական շեղում ևս: Առցանց հաղորդակցման տիրույթում օտարազգի լեզվակիրներն անձնական դերանունների ստացականությունը սկսել են արտահայտել «'s» (ապաթարց+s) վերջավորությամբ: Այսինքն, օտարազգի լեզվակիրները փորձում են գոյականի նման կազմել նաև անձնական դերանունների ստացականության կարգը, ինչպես՝ ME STILL WAITING FOR JUST HOLD ON AND BACK TO **YOU'S** ACOUSTIC VERSIONS: jk its mari i've broken into **you's** house leave a message, Richard Pryor: "Why... did you kill everyone in the house?" J-Bo: "**They's** home", so all jokes aside ashley & **i's** house is haunted...

Սոցիալական մեդիա տիրույթում լեզվական փոխազդեցություններից ամմասն չեն մնացել նաև անգլերենի խնդիր անձնական դերանունները: Ֆրանսերենի, կատալոներենի, պորտուգալերենի և այլ լեզուների

¹²O'Conner T. P., Kellerman S. "Yous" or "Youse", <<https://www.grammarphobia.com/blog/2006/08/yous-or-youse.html>> [08.08.2017]

փոխազդեցության արդյունքում անգլերենի խնդիր անձնական դերանունները ձեռք են բերել այդ լեզուների խնդրի անձնական դերանունների կիրառությանը ներհատուկ հատկանիշներ: Վերը նշված լեզուների նման անգլերենում ևս օգտատերերը սկսել են խնդիր անձնական դերանունները դնել բայից հետո՝ միության գծիկի պարտադիր առկայությամբ՝ @NICKIMINAJ come to Brazil, and **give-me** one ticket **please** mooommyy,*ISHTAR* "Be-sure the truth will **find-you** out." my dad's dad, a wwI vetran, WLD SAY: &yer blood ran cold every time he said-it! xxxan, Isn't it ironic that her name's sia, but we can't **see-her**? @timmcco Joe Strummer, he'd stand by-me; he'd attest to my good-character&nature &pure-intentions, always: but he's-dead. i **miss-him**.x:

Երրորդ գլխի չորրորդ ենթագլխում «**Լեզվական փոխազդեցությունները որպես անդրադարձ դերանունների շեղումների առաջացման հիմք առցանց շփման միջավայրում**» ուսումնասիրվում են լեզվական փոխազդեցությունների հետևանքով առցանց հաղորդակցման համատեքստում երևան եկած անդրադարձ դերանունների շեղումները:

Մերօրյա իրականությունում առցանց հաղորդակցման հասանելիությունը և աշխարհքաղաքական գործոններով պայմանավորված զանգվածային արտագաղթը նպաստում են հարակից լեզուների սերտ փոխազդեցությանը: Այդ ամենի արդյունքում, փոխազդող լեզուներում ի հայտ են գալիս լեզվական փոխներթափանցումներ, որոնք դրսևորվում են ինչպես առանձին բառերի տեսքով, այնպես էլ տարբեր քերականական կառույցներում:

Արևմտյան լեզվաբան Ռ. Հիկին նշում է, որ լեզվական շփումը հաճախ լեզուների միաձուլման է հանգեցնում¹³: Հատկապես ակտիվ փոխազդեցության մեջ են գտնվում անգլերենը, իսպաներենն ու ֆրանսերենը, ինչի արդյունքում անգլերեն բազմաթիվ բառեր իրացվում են նոր ու ինքնատիպ կաղապարներով: Այս ամենից անմասն չեն մնում անդրադարձ դերանունները: Ներկայումս անգլալեզու մի շարք սոցիալական ցանցերում օգտատերերի կողմից շրջանառվում են այնպիսի անդրադարձ դերանուններ, որոնց առաջին բառարմատը կազմված է իսպաներեն, իտալերեն, ֆրանսերեն և այլ լեզուների դերանուններից, իսկ երկրորդը՝ պահմանվել է նույնությամբ՝ tusef, elsef, oreself, ellaself, yoself, miself, tiseif, loself, laself, unoself, unaself, unasselves, nousself, luiself, moiseif և այլն:

¹³Hickey R. *Internally and Externally Motivated Language Change*, The Handbook of Historical Sociolinguistics. Malden, Wiley-Blackwell, p. 404, <[https://www.unidue.de/~lan300/Internally and externally motivated language change.pdf](https://www.unidue.de/~lan300/Internally_and_externally_motivated_language_change.pdf)> [17.12.2017]

Առցանց հաղորդակցման համատեքստում օտարազգի լեզվակիրների կողմից նկատվում են նաև անդրադարձ դերանունների անհարկի կիրարկումներ՝ I get **myself** up, shower **myself** and have breakfast before I leave for work. She becomes **herself** angry when she doesn't get her way. Bob shaved **himself**.

Լեզվական փոխազդեցությունների արդյունքում ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիայում զարգանում է անդրադարձ դերանունները գրելու մեկ այլ միտում: Առցանց հաղորդակցման միջավայրում օտարազգի լեզվակիրները փորձում են իրենց մայրենիի նմանակմամբ ստեղծել այսպես կոչվող «անդրադարձ բայեր»: Վերջիններս կազմված են բայից և անդրադարձ դերանվան «self» վերջավորությունից, ինչպես՝ Im Supposed To **DoSelf** Administered Allergy Shots Every Other Day But I Be Forgetting. ok i gtg **washself** brb kisses., ... and he always **makesELF** laugh with his derpy faces. I know how you **feelsself**. Good probably all communist democrats. Actually they are the communist liberals and blames other party for Russia hack they need **to lookself**.

Ուսումնասիրության արդյունքները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրահանգումները՝

1. Առցանց հաղորդակցման միջավայրում «սոցիալական մեդիա» գերժանրը համարվում է հաղորդակցման և տեղեկատվության փոխանակման ամենաբուռն և դինամիկ կերպով զարգացող տիրույթ: Վերջինս աչքի է ընկնում մի շարք առանձնահատկություններով, որոնց շարքում ազատ արտահայտվելու յուրօրինակ հատկանիշն էական նշանակություն ունի: Վերջինս նպաստում է լեզվական նորամուծությունների և այլաձև կիրարկումների առաջացմանը: Այս գերժանրի լեզուն բնութագրվում է հապավումների, համառոտագրումների, խորհրդանշանների, պայմանական նշանների ակտիվ գործածմամբ:
2. Ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիայում առկա են բազմաթիվ լեզվական շեղումներ, որոնց շարքում անձնական և անդրադարձ դերանուններն առանձնահատուկ տեղ են զբաղեցնում, քանի որ այս դերանունները մեծ հաճախականությամբ են գործածվում, կարող են փոխարինել տարբեր բառային միավորների, մատնանշում են հաղորդակցման մասնակիցներին և խոսքին հաղորդում արտահայտչականություն և զգացմունքայնություն: Վերջիններս գործաբանորեն առավել նշանակալի են, քան սովորական բառաձևերը:

3. Ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիայում առկա անձնական և անդրադարձ դերանունների շեղումների շրջանառումը պայմանավորված է երեք գործոնով՝ ա) առցանց խոսքաշարում ժամանակ և տարածություն խնայելու՝ այսինքն տեխնիկապես միջնորդավորված են, բ) լեզվական փոխազդեցությունների և շփումների արդյունքում են առաջանում և գ) բարբառային տարրեր են: Վերջիններս օգտատերերի կողմից ակտիվ գործածման շնորհիվ միտված են թափանցելու գրական լեզու և դառնալու լեզվական նորմ և օրինաչափություն:
4. Առցանց հաղորդակցման խոսքաշարում ժամանակ և տարածություն խնայելու նպատակով օգտատերերը մի կողմից անձնական դերանունները գրում են համանուն հնչյունային նմանակմամբ, ինչպես՝ u, w, dey, dei, իսկ մյուս կողմից դրանք իրացնում են այնպես, ինչպես հնչում են՝ ay, ai, wi, shi, hi:
5. Առցանց հաղորդակցման միջավայրում լեզվական տնտեսումը չի սահմանափակվում միմիայն անձնական դերանունների բառածևերով: Մասնավորապես վերլուծված նյութը ցույց է տալիս, որ օգտատերերը ենթակա անձնական դերանունները և բայերն իրացնում են մեկ բառային միավորի միջոցով, որը միաժամանակ արտահայտում է թվադիմային և ժամանակային քերականական կարգեր, ինչի արդյունքում լեզվի ենթակա-ստորոգյալ-խնդիր (SVO) կայուն շարահյուսական կառուցվածքը փոփոխության է ենթարկվելու:
6. Խնդիր անձնական դերանունների հարացույցում նախորդող բայերին կամ նախդիրներին միանալու միտում է նկատվում, ինչի արդյունքում նոր լեզվական միավորներ են առաջանում:
7. Անդրադարձ դերանունների թվի քերականական կարգում տեղի է ունենում վերջավորությունների միասնականացում: Այսինքն և՛ եզակի, և՛ հոգնակի թվում անդրադարձ դերանունների երկրորդ բաղադրիչները կազմվում են միանման ձևով: Հոգնակիությունն արտահայտվում է միայն առաջին արմատում:
8. Ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիայում անձնական և անդրադարձ դերանունները ձեռք են բերել առկայացման քերականական կարգ: Անձնական դերանունները գործածվում են որոշյալ և անորոշ հոդերի հետ, այսինքն ձեռք են բերել որոշյալության ենթակարգը, մինչդեռ անդրադարձ դերանունները՝ s ստացական վերջավորության հետ գործածվելով՝ ստացականության ներիմաստն են արտահայտում:

9. Օգտատերերի գրառումներում անդրադարձ դերանունները գործածվում են ենթակայի, ուղիղ և անուղղակի խնդրի պաշտոններում ձեռք բերելով հոլովի քերականական կարգ: Այսինքն, դերանունների հոլովական համակարգում տեղի է ունենում փոխարկում (կոնվերսիա):
10. Առցանց հաղորդակցման միջավայրում առկա են անդրադարձ դերանունների բազմաթիվ տարատեսակներ, որոնց բաղադրիչները կազմված են տարբեր լեզուներից:
11. Առցանց հաղորդակցման տիրույթում նկատվում է անդրադարձ դերանունների հավելադրական կիրարկումներ: Այսինքն, օգտատերերն իրենց մայրենիի նմանակամաբ անդրադարձ դերանունները գործածում են այնպիսի բայերի հետ, որոնք անգլերենում չեն պահանջում անդրադարձ դերանունների պարտադիր առկայություն:
12. Ե՛վ անձնական, և՛ անդրադարձ դերանունները դուրս են եկել դերանվանը ներհատուկ խոսքիմաստային տիրույթից, և, համադրվելով հիմնականում անուն խոսքի մասերի վերջածանցներին, հեշտությամբ կարող են վերարտադրվել մեկ խոսքի մասից մյուսը:
13. Լեզվական ներթափանցումների արդյունքում անձնական և անդրադարձ դերանունների թվի քերականական կարգում տեղի է ունենում փոփոխություն: Մասնավորապես երկրորդ դեմք եզակի թվի անձնական դերանունների հոգնակին օտարազգի լեզվակիրները կազմում են s հոգնակիակերտ վերջավորության հավելմամբ (yous), իսկ անդրադարձ դերանունների պարագայում ves վերջավորությամբ:
14. Ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիայում նոր բայախմբի առաջացման միտում է նկատելի, այսպես կոչված «անդրադարձ բայերի», որոնք օգտատերերը կազմում են ցանկացած բային անդրադարձ դերանվան միայն եզակիակերտ self վերջավորությունը համակցելով (feelself, likeself):
15. Անդրադարձ դերանունների երկու բաղադրիչներում տառերն անընհատ սղվում են, ինչի արդյունքում կարելի է կանխորոշել, որ ապագայում անդրադարձ դերանունները սկզբնատառային միակցությունների են վերածվելու:

Ուսումնասիրության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում՝

1. «Անձնական և անդրադարձ դերանունների հուզարտահայտչական առանձնահատկությունները ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիայում», Բանբեր Երևանի Վ.Բյուսովի անվան պետական

- լեզվահասարակագիտական համալսարանի, Լեզվաբանություն և բանասիրություն 1(38), Երևան, Լինգվա, 2016թ., էջ 195-205
2. «Սոցիալական մեդիան որպես լեզվի փոփոխության և լեզվական շեղումների հիմք», Լեզուն և գրականությունը գիտական իմացության հարացույցում, Երևան, Լուսակն, 2017, գիտ. հոդվածների ժողովածու 8, էջ 52-63
 3. «Անձնական դերանունների այլաձև կիրարկումները ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիայում», Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի: Լեզվաբանություն և բանասիրություն 2(42), Երևան, Լինգվա, 2017թ., էջ 189-207
 4. "English Reflexive Pronoun Variations on the Internet Genre Social Media", Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, 2(23) Երևան, 2017, էջ 3-11
 5. Անգլերենի անձնական և անդրադարձ դերանունների բարբառային տարբերակները ժամանակակից անգլալեզու սոցիալական մեդիայում Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, Լեզվաբանություն և բանասիրություն 1(44), Երևան, Լինգվա, 2018թ., էջ 207-220
 6. "Reflexive Pronoun Deviations in Contemporary English Social Media" ARMENIAN FOLIA ANGLISTIKA, 1-2(17)-2017, Yerevan State University Press, Yerevan 2018, pp. 69-82

ГЕВОРГ АШОТОВИЧ ГРИГОРЯН
ПРАГМАТИЧЕСКАЯ ЗНАЧИМОСТЬ ЛИЧНЫХ И ВОЗВРАТНЫХ МЕСТОИМЕНИЙ
В СОВРЕМЕННЫХ АНГЛОЯЗЫЧНЫХ СОЦИАЛЬНЫХ МЕДИА
РЕЗЮМЕ

Диссертация на тему «**Прагматическая значимость личных и возвратных местоимений в современных англоязычных социальных медиа**» посвящена исследованию лингвистических, стилистических и прагматических особенностей онлайн-коммуникации.

Объектом исследования являются современные англоязычные социальные медиа как одна из наиболее интенсивно и динамично развивающихся сфер человеческой действительности.

Предметом исследования являются отклонения и видоизмененные формы написания личных и возвратных местоимений, часто употребляемых пользователями на современных англоязычных социальных медиа.

Новизна диссертации заключается в определении отклонений личных и возвратных местоимений и выявлении других грамматических тенденций в англоязычном социальном медиа, которые впоследствии могут подвергнуть язык изменению.

Актуальность работы обусловлена тем, что на разных платформах современного англоязычного социального медиа пользователи используют почти повседневные личные и возвратные местоимения, которые используются с изменениями от существующих норм. Новые и уникальные отношения развиваются между лингвистической нормой и узусом, и, в связи с этим, необходимо подвергнуть оценке эти новые языковые реалии и выяснить их место в системе языка.

Целью нашего исследования является выявление прагматических особенностей личных и возвратных местоимений в социальных медиа, а также их изучение как в различных поджанрах социального медиа, так и на разных уровнях языка, от лексического уровня до уровня дискурс-анализа. Настоящее исследование направлено на решение нижеследующих задач:

- Обсудить лингвистические особенности онлайн общения, выявить особенности, присущие исключительно этому типу общения.

- Изучить типические лингвистические и жанровые особенности современных социальных медиа.

- Изучить семантические, когнитивные, коммуникативные и прагматические особенности личных и возвратных местоимений в разных социальных медиа.

- Выявить отклонения личных и возвратных местоимений, а также случаи их вариативного употребления в различных современных англоязычных социальных медиа.

- Проанализировать текущие тенденции возможных изменений форм личных и возвратных местоимений в различных жанрах социальных медиа.

Теоретическая ценность данной диссертации в выявлении стилистических и прагматических особенностей, присущих современным англоязычным медиа, анализе и выделении отклонений личных и возвратных местоимений, употребляемых в “социальном медиа” как гипержанре, а также выявлении частотности их употребления, что, возможно, в дальнейшем подвергнет некоторым изменениям нормы литературного языка.

Практическое значение работы заключается в том, что результаты данного исследования могут быть использованы в компьютерной лингвистике, вариационной лингвистике, медиалингвистике, при изучении областей диалектики, а также могут быть использованы студентами в качестве практического материала для написания курсовых и дипломных работ, диссертаций, на занятиях спецкурсов по практической стилистике, медиалингвистике, прагматике и лексикологии.

Данная работа состоит из введения, трех глав, которые, соответственно, делятся на подзаголовки, заключения, списка использованной литературы и приложения.

GEVORG ASHOT GRIGORYAN
PRAGMATIC EVALUATION OF PERSONAL AND REFLEXIVE PRONOUNS
IN CONTEMPORARY ENGLISH SOCIAL MEDIA
SYNOPSIS

The dissertation paper is devoted to the study of linguistic, stylistic and pragmatic features of online communication which is considered to be one of the most important spheres of human activity.

The subject-matter of present thesis paper are the deviations and conventional writings of personal and reflexive pronouns with the study of their morphological, semantic, stylistic, pragmatic, cognitive, communicative and stylistic features.

The scientific novelty of the research is the determination of English personal and reflexive pronoun variations and the revelation of varied grammatical tendencies in modern English social media which can therefore make some changes in English.

The topicality of the research is conditioned by the fact that almost every day communicators make use of new pronominal alternations on different platforms of contemporary English social media, which contradict to the norms that exist in the English language. Hence, it is necessary to evaluate these new realities and ascertain their place in the language system.

The goal of the research is to reveal the pragmatic features of personal and reflexive pronouns in social media, to study these units not only in different subgenres of social media, but also at different levels of the language structure: from the lexical level to to the discourse analysis level.

In order to achieve the above-mentioned goal, the following tasks have been set forth:

- To discuss and specify the linguopragmatic features of online communication.
- To study the linguistic and genre features inherent to contemporary English social media.
- To analyse the semantic, cognitive, communicative and pragmatic features of personal and reflexive pronouns and identify the causes of variation.
- To determine the alternations and variational uses of personal and reflexive pronouns on different platforms of contemporary English social media.
- To analyse the possible transformative tendencies in different genres of social media.

The **theoretical value of the study is the revelation of** linguopragmatic and stylistic peculiarities of contemporary English social media, as well as the analysis and determination of alternations of personal and reflexive pronouns used with high frequency in the hypergenre of "the social media", which may change language norms in near future.

The **practical significance** of the thesis paper is deeply supported by the applicability of its content in mediallynguistics, variational linguistics, computer linguistics, etc. The findings thereof can be used for lectures and seminars, as well as may serve as a theoretical basis for other research projects relevant to online discourse.

The methods of component analysis, inquiry, comparative analysis, observation, etc, have been applied to the research to fulfil the tasks of the dissertation paper.

The thesis consists of Introduction, three Chapters with relevant subchapters and endnotes, Conclusion, Bibliography and Appendix.

A handwritten signature in black ink, appearing to be 'G. G. P. P.', written in a cursive style.